# ՀՀ Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ

07.04.2017



**Սիրելի՛ մայրեր, քույրեր և դուստրեր**

Տարիներ շարունակ Մայրության և գեղեցկության տոնը հայ ժողովուրդն առանձնակի սիրով ու ջերմությամբ է նշում : Հայ կանայք մեր գիտակցության մեջ ավանդապաշտ ընտանիքի կարևորագույն սյունն են, մեր հոգսերը հավասարապես կիսողը, հայ քաջորդիներին ոգեշնչողը, ազգային ավանդույթների կրողը և մատաղ սերնդին հոգևոր արժեքներ փոխանցողը:

Գարնանաբույր տոնի առթիվ սրտանց շնորհավորում եմ բոլոր մայրերին, գեղեցիկ սեռի բոլոր ներկայացուցիչներին և ցանկանում խաղաղություն, առողջություն, հարատև սեր ու երջանկություն:

Թո՛ղ սերը միշտ ապրի ձեր սրտերում, թո՛ղ մայրական սրտի ջերմությունը, կանացի հմայքը, պայծառ ժպիտը, քնքշությունն ու գրավչությունը հավերժ լինեն ձեր ուղեկիցը:

**Սիրով և հարգանքով՝   ՀՀ Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյան**